



ՀԱՎԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6



NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE
OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
HAIA-6

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА
АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ХАИА-6

YEREVAN
IAE PUBLICATION 2024
ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2024

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԽԱ - 6

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ*

*Published by decision of the Scientific Council
of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA*

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ Արսեն Բոբոկյան

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Տորք Դալալյան

Խմբագրակազմ՝ Լևոն Աբրահամյան, Պավել Ավերիսյան,
Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան,
Ջուսյո Թրախնա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրյան, Ռուբեն Կարապետյան,
Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան,
Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տոնապետյան, Պիյեր Բատի

Editorial Board

Editor-in-Chief: Arsen Bobokhyan

Vice-Editor-in-Chief: Tork Dalalyan

Editorial Stuff: Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 6-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, Սիրակուզայի համալսարանի (ԱՄՆ) հետազոտողների հոդվածները, որոնց նախնական տարբերակները որպես գեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023 թ. հոկտեմբերի 18-19-ին ՀԱԻ Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի կազմակերպած «Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային արդի գործընթացները Հայաստանում. հիմնախնդիրներ և հեռանկարներ» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է մեկ հաղորդմամբ և Բեյրութում հրատարակվող Հայկազեան հայագիտական հանդեսի երկու համարների գրախոսությամբ:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ ԵՒ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

7

Միհրան Գալստյան

Մնալ, թե՛ գնալ. Հայաստանից հնարավոր նոր արտագաղթի սոցիալ-մշակութային հիմնախնդրի շուրջ

8

Լուսինե Տանաջյան

Հայ և այլազգի ներգաղթյալների ինտեգրումը Հայաստանում. համեմատական կողմեր

24

Սոնա Ներսիսյան

Հայաստանը ռուսաստանցի ներգաղթյալների ընկալումներում

37

Սյուզաննա Բաբսեղյան

Հայաստանի հայրենադարձության քաղաքականության հիմնահարցերն արդի իրողությունների համատեքստում

49

II. ՆԵՐԳԱՐԹՅԱԼՆԵՐ ԵՒ ՏԵՂԱՅԻՆՎԱԾՆԵՐ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏԸ

65

Գայանե Հակոբյան

«Հալեալի շուկան»՝ որպես սիրիահայերի ձեռնարկատիրական գործունեության միկրոմոդել

66

Գարիկ Աթանեսյան

Առտենտիկության խոսույթը և բեմադրված ժառանգությունը հետխորհրդային Հայաստանի զբոսաշրջային պրակտիկաներում

78

Արմինե Տիգրանյան

Ադրբեջանի կողմից բռնի տեղահանված արցախահայերի մշակութային կյանքին մասնակցության սահմանափակումները (Արցախի Հաղթութի շրջանի օրինակով)

89

III. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ

113

Ռուբեն Օհանջանյան

Պրոֆեսիոնալ մշակութային արժեքների փոփոխման որոշ հարցեր ՀՀ-ում գլոբալիզացիայի համատեքստում

114

Լուսինե Անգելուշ

Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունն արդի շրջանում

124

Մակիչ Վարդանյան

Գլոբալացման խոսույթը հայաստանյան զլմ-ներում. կրթության հիմնախնդրի համատեքստը

139

IV. ԱՎԱՆԴԱԿԱՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԸ	
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՈՒՄ	157
<i>Սվեդսկանա Պողոսյան</i>	
Հագուստը որպես խորհրդահայ և ետխորհրդահայ հասարակության սոցիալ-հոգեբանական ցուցիչ	158
<i>Հասմիկ Աբրահամյան</i>	
<i>Ռոման Հովսեփյան</i>	
Ուտեստի էթնոմշակութային դերը միգրացիայի շրջապատւոյտում (նախնական հետազոտություն՝ ըստ Սյունիքից գրառված նյութերի)	174
V. ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ	189
<i>Ռուբեն Կարապետյան</i>	
Սփյուռքի համայնքային կառույցներում հայերի ներգրավվածության խնդիրը	190
<i>Նարե Գալստյան</i>	
Հայրենիքի մասին պատկերացումները Լոս-Անջելեսի հայկական համայնքում	204
<i>Նելլի Խաչատրյան</i>	
<i>Սալվինե Մարկոսյան</i>	
<i>Մարիամ Հարությունյան</i>	
Էթնոկրոնական վերափոխարկումը համաշխարհայնացման համատեքստում (հնդկական, թուրքական և իռլանդական սփյուռքների փորձի հիման վրա)	218
VI. ՀԱՂՈՐԴՈՒՄ	237
<i>Հռիփսիմե Ասատրյան</i>	
Մանկական բանահյուսության որոշ արդի դրսևորումներ	238
VII. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ	247
Հայկազեան հայագիտական հանդեսի 2022 տարւոան զոյգ գիրքերը	248
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ	263

ՀԱՅԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6

V

ՍՓՅՈՒՌՔՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Նելլի Խաչատրյան, պ.գ.թ.
ՀԱԻ

Սալվինե Մարկոսյան
ՀԱԻ

Մարիամ Հարությունյան
ՀԱԻ

ԵԹՆՈԿՐՈՆԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽԱՐԿՈՒՄԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ (ՀՆԴԱԿԱՆ, ԹՈՒՐԹԱԿԱՆ ԵՒ ԻՌԱՆԴԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՆԵՐԻ ՓՈՐՁԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Համաշխարհայնացման գործընթացում կրոնական փոխարկման և վերափոխարկման էթնիկ բաղադրիչների ուսումնասիրության խնդրի արդիականությունը ներկայումս պայմանավորված է կրոնի դերի փոփոխությամբ:

Կրոնի կողմից իրականացվող գործառույթների տարբերվում են՝ կախված էթնոսոցիալական երևույթների բովանդակությունից և համատեքստից:

Համաշխարհայնացման գործընթացների անքակտելի մաս կազմող ակտիվ միգրացիոն հոսքերը ենթադրում են համաշխարհային կրոնների և կրոնական շարժումների տեղաշարժ, որն, ըստ էության, հանգեցնում է կրոնատածության ձևերի բազմազանեցմանն ու հասարակության մեջ կրոնական գործընթացների ակտիվացմանը: Էթնոկրոնական փոխարկման (այն է՝ այլ կրոնների և կրոնական շարժումների միանալու) և վերափոխարկման (այն է՝ սկզբնական (էթնո)կրոնական ավանդույթին վերադառնալու) գործընթացներն ուղղակի պատկանում են վերոնշյալ երևույթներին:

Հարկ է նշել, որ էթնոկրոնական փոխարկման և վերափոխարկման գործընթացները դասականորեն ուսումնասիրվել են մարդաբանության, լեզվաբանության, պատմության և միջմշակութային հետազոտությունների տեսանկյունից: Մեր օրերում, սակայն, ժամանակակից հումանիտար գիտությունների ներքո ստեղծվել է «Conversion Studies» («վերափոխարկման հետազոտություններ») ուղղությունը, որը վերոնշյալ երևույթներն ուսումնասիրելիս հենվում է ավելի լայն ոլորտի հետազոտական գործիքների ու մեթոդաբանության վրա: Դրանցից են կրոնագիտությունը, կրոնի մարդաբանությունը, կրոնի սոցիոլոգիան, ժողովրդագրությունը, վիճակագրությունը, միգրացիոն տեսությունները, աշխարհագրությունը, ազգագրությունը, բանասիրությունը, հոգեբանությունը, էթիկան, գենդերային հետազոտությունները և մշակութաբանությունը:

Այս աշխատանքի նպատակն է՝ բացահայտել էթնոկրոնական վերափոխարկման մեխանիզմները և դրանց ուսումնասիրության առանձնահատկությունները՝ հիմնվելով հնդկական, թուրքական և իրանդական սփյուռքների փորձի վրա:

Հետազոտության խնդիրն է՝ ուսումնասիրել էթնոկրոնական ինքնության ամրապնդ-

ման և վերափոխարկման մեխանիզմները՝ վերոնշյալ էթնիկ պատկանելության ներկայացուցիչներին միջև:

Աշխատանքը կատարվել է պատմահամեմատական վերլուծության, առկա գիտական գրականության, ինչպես նաև երկրորդական տվյալների վերլուծության մեթոդների կիրառմամբ:

*Հիմնաքառեր*¹ էթնոկրոնական ինքնություն, էթնոկրոնական վերափոխարկում, փոխարկում, համաշխարհայնացում, հնդկական սփյուռք, թուրքական սփյուռք, իռանդական սփյուռք:

Ներածություն

Առկա գիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնական հետազոտական նպատակները, որոնց հետամուտ են լինում էթնոկրոնական փոխարկման և վերափոխարկման երևույթն ուսումնասիրող ժամանակակից հետազոտողները, կրում են բարոյագիտական կամ հոգեբանական ուղղվածություն²:

Էթնոկրոնական կամ կրոնական փոխարկման գործընթացը տեղի է ունենում աստիճանաբար՝ անցնելով *ակուլյուրացիայի*, *ադեզիայի*, *սինկրետիզմի* և *փոխակերպության* փուլերով:

Ակուլյուրացիան ուսումնասիրվող խմբի ակտիվ ինտեգրումն է նոր էթնոշակության և սոցիալ-տնտեսական տարածքի: *Ադեզիան* (այն է՝ «կաշել և պահել») դրսևորվում է նոր հավատալիքների և էթնոկրոնական սովորույթների ընդունմամբ՝ հների հետ մեկտեղ: *Սինկրետիզմի* («կրոնական բաղադրիչների գուգակցում, միաձուլում») փուլում տեղի է ունենում հին և նոր հավատալիքների և սովորույթների համաձայնեցում և միավորում նոր կրոնական սինթեզ կառուցելու նպատակով: Իսկ *փոխակերպումը* հին էթնոկրոնական տարածքի ամբողջական փոխարինումն է նորով²:

Վերը նշված փուլերը մանրամասնորեն կարելի է դիտարկել նաև էթնոկրոնական կամ կրոնական վերափոխարկման գործընթացում, որտեղ կարևոր դեր ունեն նաև լեզվական գաղափարախոսությունները՝ հատկապես կարևորելով ուսումնասիրությունները սոցիալական հարաբերությունների էթնոսոցիալական և էթնոշակության դիտանկյուններից:

Սփյուռքի փորձը էթնոկրոնական վերափոխարկման մեխանիզմների ձևավորման գործընթացում.

Հնդկական սփյուռք

Ժամանակակից զարգացած երկրների արտաքին քաղաքականությունը համաշխարհայնացման համատեքստում պահանջում է «փափուկ» և «կոշտ» մոտեցումների ներդաշնակ համադրություն, այսինքն՝ ուղղակի ազդեցության և անուղղակի ազդեցության հավասարակշռություն: Այս պայմաններում Հնդկաստանի սփյուռքյան քաղաքականությունը կարելի է համարել որպես «փափուկ

1 Harms 1962; Nadkarni 2003.

2 Rambo 2014, 25–47.

ուժի» գործիք: Ինչպես սփյուռքի ներսում, այնպես էլ սփյուռքի սահմաններից դուրս գործում են պետական կազմակերպություններ, որոնց հիմնական նպատակներից է հնդիկների էթնոկրոնական ինքնության խթանման և ամրապնդման, նաև էթնոկրոնական վերափոխարկմանը միտված պետականությունն մշակված մեխանիզմների կիրառումը:

Հնդիկների *էքսպանսիան* դեպի սահմանակից երկրներ տեղի է ունեցել դեռևս հին ժամանակներից: Միգրացիայի «երկրորդ ալիքը», որը կարելի է համարել նաև բռնի, կապված է բրիտանական գաղութարարների հետ: 1833-1917 թթ. մոտ 30 միլիոն հնդիկ բռնի տեղահանվել է թերակղզուց և բնակություն հաստատել Հնդկական օվկիանոսի այլ երկրներում:

1960-ականներից սկսվեց հնդկական միգրացիայի «երրորդ ալիքը»: Այս ալիքի միգրանտներին պայմանականորեն բաժանում են երկու խմբի՝ «նավթագործներ» (ինժեներներից մինչև սևագործ բանվորներ) և «արհեստավարժներ» (մտավորականություն և էլիտա): 1990-ականներից սկսած՝ ի հայտ է գալիս «նոր սփյուռք» հասկացությունը, որը ներառում է բացառապես բարձր և միջին մակարդակի մասնագետների՝ պրոֆեսորների, բժիշկների, ծրագրավորողների, մենեջերների ևն³: Եվ հատկապես միգրացիոն «երրորդ ալիքի» և «նոր սփյուռքի» ներկայացուցիչները կարևոր դեր են խաղացել Հնդկաստանի «փափուկ ազդեցության» և սփյուռքյան քաղաքականության ամրապնդման և ուժեղացման գործում: Հնդկական սփյուռքի ներուժը սկսեց դիտարկվել որպես հնդկական «փափուկ ուժի» կիրառման աղբյուր և ուղեցույց:

Այսօր, ըստ Հնդկաստանի կառավարության պաշտոնական տվյալների, հնդկական սփյուռքը տարածված է աշխարհի շուրջ 206 երկրներում. դրանց թիվը կազմում է առնվազն 28,5 միլիոն մարդ, որից ավելի քան 17 միլիոնն այլ երկրների քաղաքացիներ են:

Մեր օրերում Հնդկաստանի իշխանության դեկին գտնվող երկու հիմնական կուսակցությունները՝ «Հնդկական ազգային կոնգրեսը» և «Հնդկական ժողովրդական կուսակցությունը» («Բհարաթիա ջանատան»), որին հարում է Հնդկաստանի ներկա վարչապետ Նարենդրա Մոդին, հավատարիմ են ազգայնական գաղափարախոսությանը: Դրա հետևանքով Հնդկաստանի արտաքին և սփյուռքի քաղաքականությունը «փափուկ ուժից» աստիճանաբար վերածվում է «փափուկ հմայքի» ազդեցության:

Հնդկական մշակույթը և կրոնական ավանդույթները լավագույնս դրսևորվում են ժամանակակից տեղեկատվական դարաշրջանում: Հնդկաստանի փորձերը՝ ստեղծելու «Incredible India» անվան տակ ազգային ապրանքանիշ-գաղափարախոսություն, ներառելով դրանում քաղաքական և մշակութային բաղադրիչներ, մեծավ մասամբ հաջողված են:

Սա ազդեց նոր կառույցների ձևավորման (Հնդկաստանի ԱԳՆ-ին կից հանրային դիվանագիտության բաժին, Հնդկաստանի ԱԳՆ-ին կից արտասահմանյան գործերի բաժին) և նախորդների (Հնդկաստանի մշակութային հարա-

բերությունների խորհուրդ և Հնդկաստանի արտաքին հարաբերությունների խորհուրդ) արդիականացման վրա, որոնք էլ, պարզվեց, ունակ են աշխատելու Հնդկաստանի սահմաններից դուրս՝ «փափուկ հմայքը» ուժեղացնելու ուղղությամբ: Հնդկական սփյուռքի ներուժը սկսեց դիտարկվել որպես հնդկական «փափուկ ուժի» աղբյուր և ուղեցույց:

Դա հասկանալով՝ Հնդկաստանի կառավարությունը 2000-ականներից հիմնել է հնդկական սփյուռքի հարցերով զբաղվող Բարձր մակարդակի հանձնաժողով, որը վերլուծում է տարբեր երկրներում հնդկական ծագում ունեցող մարդկանց և ոչ-*ռեզիդենտ* հնդիկների կարգավիճակը: Կառույցն ուսումնասիրում է հնդկական տարբեր համայնքների ուժեղ և թույլ կողմերը՝ ընդհանուր առմամբ, ձևավորելով Հնդկաստանի սփյուռքյան քաղաքականությունը, մշակելով ռազմավարություն՝ սփյուռքը ներգրավելու Հնդկաստանի սոցիալ-տնտեսական և տեխնոլոգիական առաջընթացին:

Արտագաղթողների հետ փոխգործակցության ոլորտում Հնդկաստանի նշանակալի նախաձեռնությունների շարքում կարելի է առանձնացնել «Ճանաչիր Հնդկաստանը» (Know India), որը նպաստում է Սփյուռքում 18-ից 26 տարեկան հնդկական ծագում ունեցող երիտասարդների էթնոկրոնական կողմնորոշմանը, ինչպես նաև «Գտի՛ր քո արմատները» (Tracing your roots) ծառայությունը, որում մեծ նշանակություն է տրվում առցանց տեխնոլոգիաներին, որոնք արտագաղթողներին հնարավորություն են տալիս գտնելու Հնդկաստանում բնակվող մերձավոր և հեռավոր ազգականներին:

Հնդկական «նոր սփյուռքը» զարգացած երկրներում համարվում է ամենահաջողակ սփյուռքներից մեկը: Հնդիկները արագ են ձուլվում, չնայած արտահայտված բազմաէթնիկությանը և շատ երկրներում տարածվածությանը, հնդկական սփյուռքի *մոբիլիզացիոն* հնարավորությունները մեծ են այն պատճառով, որ «հնդկական աշխարհ» հասկացությունը և դրա պահպանումը, նույնիսկ ձուլվածների համար, միևնույնն են, արժեքավոր գաղափար և ինքնության հիմք են: Հնդկաստանը նաև «նոր սփյուռքի» հետ է կապում բազմաթիվ հավակնոտ տնտեսական ծրագրերի իրականացումը⁴:

Ներկայումս Հնդկաստանի պետական քաղաքականության գաղափարական հիմքը, ըստ էության, հինդուական «էթնոկրոնական» ազգայնականությունն է: Այս գաղափարախոսության ներքո է հանդես գալիս «Սանգհի պարիվարը» (Սանգհների ընտանիքը), որը տարբեր պետական կազմակերպությունների հիերարխիկ ցանց է, մեկ այլ կառավարական կազմակերպության՝ «Ռաշտրիա սվայամսևակ սանգհի»-ի (Հայրենիքի կամավոր ծառաների միություն) բարձր ղեկավարության ներքո:

Այս պետական կազմակերպությունները զբաղված են Հնդկաստանի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության հարցերով, որոնք ներկայացված են ի դեմս երկու «էթնոկրոնական» ազգայնական կազմակերպությունների՝ «Հինդու սվայամսևակ Սանգհ» (Հինդուիզմի կամավոր ծառաների

միություն) և «Վիշվա Հինդու փարիշադ» (Հինդուների համաշխարհային խորհուրդ), որոնք ակտիվորեն գործում են երկրի սահմաններից դուրս: «Հինդուիզմի կամավոր ծառաների միությունը» ներկայումս գործում է աշխարհի 156 երկրներում և ունի 3289 մասնաճյուղ: «Հինդուների համաշխարհային խորհուրդ» ամբողջ աշխարհում ունի 29 մասնաճյուղ և հիմնականում աշխատում է հնդկական խոշոր սփյուռք ունեցող երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ն, Կանադան, Մեծ Բրիտանիան, Ավստրալիան, ՀԱՀ-ը ևն:

Վերոնշյալ կազմակերպությունների նպատակներն են՝

- սփյուռքի հնդիկների էթնոկրոնական ինքնության պահպանում,
- սփյուռքի հնդիկների էթնոկրոնական ինքնության պահպանում և նրանց այլ էթնոկրոնական խմբերի անցման կանխարգելում,
- հնդկական սփյուռքի համախմբում,
- սփյուռքում հինդուիզմի և նրա բարոյական ու հոգևոր արժեքների պաշտպանություն ու քարոզչություն,
- կրոնափոխ եղած հինդուների (դեպի քրիստոնեություն կամ իսլամ) վերադարձը դեպի հինդուիզմ:

Նրանց գործունեության հիմնական ուղղությունը տարբեր երկրների ուսումնական հաստատություններում հինդուական կրոնական կրթության կազմակերպումն է, որտեղ և նրանց մասնաճյուղերն են: Այդ թվում նաև՝

- հինդուական տաճարների կառուցում,
- մասնակցություն բարեգործական ակցիաներին,
- նյութական և սոցիալական աջակցության տրամադրում հինդուներին, այդ թվում՝ երեխաներին, տարեցներին և հաշմանդամներին,
- հինդուների և հինդուիզմի վարկաբեկման դեմ բողոքի ցույցեր ընդդեմ լրատվամիջոցների կամ կառավարությունների համապատասխան գործողությունների դեմ, հնդիկներով խիտ բնակեցված երկրներում,
- հինդուական կրոնական տոների կազմակերպում (Դիվալի, Ջանմա-աշտամի, Ռամա-նավամի) ևն,
- յոգայի փառատոների և մարզական մրցումների կազմակերպում՝ շեշտը դնելով այս տոնակատարություններին սփյուռքյան ընտանիքների ներգրավման վրա:

Հնդկաստանում «Հայրենիքի կամավոր ծառաների միություն» կազմակերպությունը և սփյուռքում նրա ճյուղը՝ «Հինդուիզմի կամավոր ծառաների միությունը» պատկանում են այժմ իշխող Հնդկաստանի ժողովրդական կուսակցությանը:

Վարչապետ Նարենդրա Մոդիի անձնական ղեկավարությամբ՝ զարգացման ծրագրեր են իրականացվում ինչպես հայրենիքում, այնպես էլ սփյուռքում: Օրինակ՝ տնտեսական ծրագիր՝ «Երկրի զարթոնքի ճակատ», կրոնական ծրագիր՝ «Հինդուների համաշխարհային խորհուրդ» ևն⁵:

Բոլոր կազմակերպություններն ու դրանց գործընկերները հավատարիմ են գաղափարական հիմնական կետերին, որոնք ուղղված են հինդուական էթնոկրոնական ինքնության պահպանմանը և էթնոկրոնական վերափոխարկման մեխանիզմների ստեղծմանը:

Ինչպես Հնդկաստանի, այնպես էլ սփյուռքի կրթական հաստատություններում (դպրոցներում, համալսարաններում) հինդուական կրոնական կրթության ներդրումը, հինդուական տաճարների կառուցումն ու պաշտպանությունը, կրոնական համաժողովների, հանդիպումների և տոների անցկացումը, իրենց հերթին, հիմնարար դեր են խաղում ամբողջ աշխարհում սփռված հնդիկների էթնոկրոնական ինքնության պահպանման և էթնոկրոնական վերափոխարկման հարցերում:

Հնդկաստանի սփյուռքյան քաղաքականության մեջ հնդկական հատուկ ծառայությունները նույնպես ունեն իրենց գործառույթներն ու նշանակությունը: Հնդկական հետախուզությունը ներգրավված է տեղեկատվական անվտանգության հարցերում ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, հատկապես սփյուռքում: Վերահսկում է հնդիկ երիտասարդ սերնդին ուղղված կայքերի մեծ մասը, նպաստում է հնդկական ժամանակակից և ավանդական գրականության տարածմանը ինչպես *Էմիգրացիոն*, այնպես էլ հայրենական: Այսպիսով՝ հնդկական կրոնական տարրը դառնում է Արևմուտքի մեծ քաղաքների մշակութային կյանքի անբաժանելի մասը:

Եւ չնայած այն հանգամանքին, որ հնդկական սփյուռքում արդեն մեծացել է մի սերունդ, որի համար բնակության երկրի լեզուն հարազատ է դարձել, համայնքներում, այնուամենայնիվ, գերակշռում է էթնո-կրոնական նույնականացման հարցը, և նախնիների հայրենիքի լեզուն և գրականությունը կարևոր դեր են խաղում ազգային էթնոկրոնական ինքնագիտակցության պահպանման գործում:

Հնդկական գրականության, մշակութային միջոցառումների, ներառյալ մշակութային քարոզչության՝ ֆիլմերի, երգերի տարածման միջոցով և աճող կրոնական գործոնի ազդեցության պարագայում այսօր արտագաղթողների երեխաների և թոռների ավանդական մշակութային արժեքների օտարման գործընթացը հնարավոր է դարձել դանդաղեցնել⁶:

Վերոնշյալ բոլոր մեխանիզմներն ունեն մեկ հիմնական նպատակ՝ պահպանել և վերադարձնել սփյուռքի ներկայացուցիչներին դեպի հինդուիզմի արմատները, պաշտպանել նրանց իրավունքները և քարոզել հնդկական ավանդական արժեքները:

Էթնոկրոնական վերափոխարկման՝ թուրքական փորձը

Թուրքական սփյուռքը աշխարհում ամենաարագ աճող և երիտասարդ սփյուռքներից մեկն է և հատել է 6 միլիոնի սահմանը:

Թուրքական համայնքներ կան Ավստրալիայից մինչև ԱՄՆ⁷, սակայն թուրք միգրանտների հիմնական մասը բնակվում է Արևմտյան Եվրոպայում՝ մասնավորապես Գերմանիայում, Ֆրանսիայում, Հոլանդիայում, Բելգիայում:

Թուրքական սփյուռքի ձևավորումը կապված է եվրոպական որոշ պետությունների՝ 20-րդ դարի երկրորդ կեսին առաջացած աշխատուժի պակասն առավել աղքատ երկրներից միջպետական պայմանագրերի հիման վրա հյուր-աշխատողների (Gastarbeiter)⁸ ներգաղթով լրացնելու քաղաքականության հետ:

Հատկանշական է, որ Թուրքիայում 2002 թ.՝ «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալուց հետո, երկրում տեղի ունեցած քաղաքական, տնտեսական և գաղափարական փոփոխությունների արդյունքում առավելապես շեշտադրվել է թուրքական սփյուռքի՝ որպես երկրի դիվանագիտությանն աջակցող «փափուկ ուժի»⁹ դերը: Օգտագործելով իր հիմնադրած կրթական և մշակութային կենտրոնները, ֆինանսավորելով ամենատարբեր կրթական նախագծեր՝ թուրքական ղեկավարությունը կարողացել է արտերկրում ստեղծել իր դրական կերպարը:

Պետություն-սփյուռք համագործակցության ձևաչափում իրականացվել է սփյուռքի հետ կայուն հարաբերությունների հաստատման և զարգացման քաղաքականություն՝ օրակարգ բերելով նաև այլ երկրների սփյուռքների հետ համագործակցության հարցը¹⁰:

Այս համատեքստում թեև հարկ է նշել, որ Թուրքիայի՝ արտերկրում թուրքական ազդեցության ուժեղացմանը և իր քաղաքացիների կյանքի որակի բարելավմանը միտված քաղաքականությունը եվրոպական երկրներում հաճախ բախվում է խտրական վերաբերմունքի¹¹:

Ներկայումս Թուրքիայում «սփյուռք» եզրույթը կրում է առավելապես քաղաքական իմաստ: Մինչ այդ Արևմուտք և հատկապես եվրոպական երկրներ մեկնած աշխատավորներին բնորոշելու համար օգտագործվում էր gurbetçi¹² (թարգմանաբար՝ պանդուխտ) բառը: Միայն վերջին շրջանում է, որ «սփյուռք» եզրույթը կիրառվում է եվրոպաբնակ թուրքերին բնորոշելու համար¹³:

Պատմական տեսանկյունից «թուրքական ինքնություն» հասկացությունը ներառում է մի քանի *կայուն գործիք*. առաջին՝ էթնիկ-ռասայական ինքնություն, երկ-

7 Aydin 2014, 10.

8 Чулковская 2014, 10. 1950-1960-ական թթ. բնակչության արագ աճի, տնտեսական և քաղաքական մի շարք խնդիրների պատճառով ծանր վիճակում գտնվող Թուրքիայի այսպիսի պայմանագրերը հնարավորություն ընձեռեցին մի կողմից նվազեցնել գործազուրկների թիվը, մյուս կողմից՝ հարստացնել երկիրը արտերկրում աշխատող հայրենակիցների ուղարկած գումարներով, իսկ նրանց վերադարձից հետո տնտեսության մեջ կիրառել եվրոպական առաջատար երկրներում ձեռք բերված փորձը և գիտելիքները:

9 «Փափուկ ուժ» տերմինը 1990 թ. շրջանառության մեջ է դրել ամերիկացի քաղաքագետ Նեյլը (Nye 2004):

10 Сафонкина 2014, 149.

11 Öktem 2014, 6.

12 Aydin 2014, 9.

13 Ünver 2013, 183.

րորդ՝ կրոնական, երրորդ՝ ազգային¹⁴: Առաջին հերթին թուրքական ինքնությունն առաջացել է որպես ինքնություն, որը բնութագրում է հասարակությունը էթնիկ կամ ռասայական տեսանկյունից: Թուրքական էթնիկ-ռասայական ինքնության հետ ասոցացվող և նրա ներկայացուցիչների կողմից կիսվող տարրերի մեջ ամենակարևորը, անկասկած, հենց «թուրք» անվանումն է և թուրքերենը:

«Թուրքական ինքնություն» հասկացությունը ենթադրում է նաև կրոնական ինքնություն: Քանի որ 16-րդ դարում տեղի ունեցավ թուրքական ինքնության և մահմեդականության վերջնական նույնականացումը, այս իմաստով պետք է ընդգծել, որ «թուրք» և «մուսուլման» հասկացությունները համընկնում են և կրում նույն իմաստը¹⁵:

Ուշագրավ է այն, որ այս պարագայում Օսմանյան կայսրությունն ընկալվում էր ոչ թե որպես թուրքական, այլ իսլամական կայսրություն:

«Թուրքական ինքնություն» հասկացությունը ներառում է նաև ազգային ինքնություն եզրույթը, որն առաջացել է ազգային պետության, այն է՝ Թուրքիայի հանրապետության ձևավորմամբ¹⁶:

Թուրքական սիյուոքում էթնոկրոնական վերափոխարկման մեխանիզմները գործի դնելու համար տարբեր ոլորտներում իրականացվում են մի շարք նախաձեռնություններ: 2008 թ. Գերմանիայում թուրքական համայնքի հետ հանդիպման ժամանակ Ռ. Թ. Էրդողանը հայտարարել էր, որ ձուլումը համամարդկային մեղք է և հանցագործություն մարդկության դեմ: Միաժամանակ նա թուրքերին կոչ էր արել ինտեգրվել, բայց չձուլվել, նախ սովորել թուրքերեն, հետո՝ գերմաներեն. «Թուրքերենը ձեր մայրենի լեզուն է, և դուք պետք է այն սովորեցնեք ձեր երեխաներին»¹⁷:

Էթնոկրոնական ինքնության պահպանմանն ուղղված նախաձեռնություններից է մզկիթների կառուցումը, որոնց թիվը տարեցտարի ավելանում է. այդ գործընթացին ակտիվ մասնակցում են թուրքական կրոնական համայնքները: Դրանցից ամենաազդեցիկը Ֆեթուլլան Գյուլենի կրոնական համայնքն է, որը 1990-ականներին ետխորհրդային տարածքում հիմնել է տասնյակ դպրոցներ¹⁸:

Սզկիթների ներսում և շրջակայքում հիմնականում տիրում է թուրքական մթնոլորտ: Շրջակայքում կառուցվում են թուրքական անուններով խանութներ՝

14 Юрдцев 2010.

15 Waxman 2000, 13-14.

Մամուլների ժամանակաշրջանում թուրքական գերիշխանությունը նկատվում էր Աֆրիկայում և Միջերկրական ծովում, հատկապես՝ Երուսաղեմում և Եգիպտոսում: Այդ ժամանակվանից «Թուրք» բառն ամբողջ աշխարհի համար դարձել է մուսուլման բառի հոմանիշը: Տե՛ս Ишак 2020, 38.

16 Sasajkovski et al. 2019, 125. Թուրքիայի Հանրապետությունը հռչակվել է 1923 թ. հոկտեմբերի 29-ին:

17 Das sagte Ministerpräsident Erdogan in Köln.

URL: <https://www.welt.de/debatte/article1660510/Das-sagteMinisterpraesident-Erdogan-in-Koeln.html> դիտումը՝ 06.10.2023

18 Այս մասին առավել մանրամասնորեն տե՛ս Иванов 2014.

Թուրքիայից բերված ապրանքներով են: Մզկիթներում կան հատուկ սենյակներ երեխաների համար, որտեղ նրանց սովորեցնում են Ղուրանի թուրքերեն և արաբերեն ճիշտ ընթերցանությունը¹⁹:

Սփյուռքում թուրքերը հնարավորություն ունեն դիտելու թուրքական հեռուստատեսության հաղորդումները: Առավել տարածված են այն հեռուստաալիքները, որոնք վերաբերում են սփյուռքում բնակվող թուրքերին: Բացի այդ՝ պարտադիր հեռարձակվում են կրթական և պատմական սերիալներ²⁰:

Թուրքիայի հեռուստատեսությունն ամեն տարի հեռարձակում է կրոնական և ազգային տոների անցկացումը. սա թույլ է տալիս սփյուռքում բնակվող թուրքերի շրջանում ուժեղացնել էթնոկրոնական ինքնությունը:

Տարածաշրջանի երկրների հետ տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային կապերի զարգացման և ամրապնդման համար Թուրքիան օգտագործել է մի շարք ինստիտուտներ:

Թյուրքախոս պետությունների հետ հարաբերությունները զարգացնելու համար կառավարության որոշմամբ 1991-ից գործում է Թյուրքական համագործակցության և համակարգման գործակալությունը (Türk İşbirliği ve Koordinasyon Ajansı, այսուհետ՝ TİKA)²¹: Կազմակերպության պաշտոնական կայքում տեղադրված հայտարարության համաձայն՝ դրա նպատակն է ԽՍՀՄ փլուզման արդյունքում անկախություն ձեռք բերած Կենտրոնական Ասիայի պետությունների և Կովկասի ժողովուրդների հետ տնտեսական, հասարակական, մշակութային, կրթական և կրոնական կապերի սերտացումն ու ակտիվ համագործակցությունը²²: Սակայն այս կազմակերպությունը սկսեց ակտիվ գործունեություն ծավալել նաև դեպի բալկանյան, Առաջավոր Ասիայի, Արևմտյան Եվրոպայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի պետություններ:

1993 թ. Թուրքիայի նախաձեռնությամբ ստեղծվել է Թյուրքալեզու երկրների մշակույթի և տեղեկատվական տեխնոլոգիաների կազմակերպությունը՝ Թյուրքսոյը, որն անվանում են թյուրքական աշխարհի ՅՈՒՆԵՍԿՕ²³:

Թյուրքսոյն իր խնդիրը տեսնում է թյուրքական ժողովուրդների հոգևոր մերձեցմանն ու եղբայրական միասնության ամրապնդմանը նպաստելու, թյուրքական մշակույթն աշխարհում ներկայացնելու և դրա ավանդույթները հաջորդ սերունդներին փոխանցելու մեջ²⁴: Կազմակերպության գլխավոր գրասենյակը գտնվում է Անկարայում:

Մշակույթի պահպանության ուղղությամբ լուրջ աշխատանքների սկիզբ են համարվում 2007 թ. հիմնադրված միջնադարյան թուրք բանաստեղծ Յուսու Էմրեի անվան մշակութային կենտրոնները (Yunus Emre Vakfi): Հիմնադրա-

19 Киреев 2002, 75-76.

20 Сафонкина 2014, 153.

21 Թյուրքական համագործակցության և համակարգման գործակալության պաշտոնական կայքէջ՝ (TİKA), URL: <http://www.tika.gov.tr/tr/sayfa/hakkimizda-14649> դիտումը՝ 06.10.2023

22 Կազմակերպության մասին տե՛ս Մինասյան 2014:

23 Сафонкина 2014, 151.

24 Կազմակերպության պաշտոնական կայքէջը <http://www.turksoy.org> դիտումը՝ 06.10.2023

մի կողմից ֆինանսավորվող կենտրոններում, որոնց թիվն արտասահմանում հասնում է մոտ 25-ի²⁵, քարոզվում են թուրքական մշակույթային և կրոնական արժեքները, անցկացվում են թուրքերենի դասընթացներ ևն:

2009 թ. դեկտեմբերին Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայում նմանատիպ կենտրոնի բացման ժամանակ իր ելույթում Ա. Գյուլը «Յունուս Էմրե» հիմնադրամն անվանել է «Թուրքիայի անտեսանելի զենք»²⁶:

«Յունուս Էմրե» կենտրոնների տեղաբաշխման աշխարհագրությունը բավական ընդգրկուն է. այն ներառում է նաև թուրքական ժողովուրդներով բնակեցված գրեթե բոլոր երկրները:

Այս համատեքստում նշենք, որ թուրքական քաղաքական և գիտական շրջանակները փորձում են «թուրքական սփյուռք» հասկացության մեջ ներառել նաև Կենտրոնական Ասիայում, Բալկաններում, ՌԴ-ում ապրող թուրքական ժողովուրդներին:

2010 թ. մարտի 24-ին ԹԱՄԺ-ի (Թուրքիայի ազգային մեծ ժողով) որոշմամբ հիմնադրվեց Արտասահմանում բնակվող թուրքերի և բարեկամ հասարակությունների վարչությունը (Yurtdışı Türkler ve Akraba Topluluklar Başkanlığı), որի նպատակը, նախկին ղեկավար Քեմալ Յուրթնաչի խոսքերով, արտասահմանում բնակվող թուրքերին անկազմակերպ ամբոխից սփյուռքի վերածելն է²⁷: Վարչությունը Թուրքիայի փոխվարչապետի անմիջական վերահսկողության տակ է:

Վարչությունը կազմված է 9 բաժիններից, որոնք ակտիվ աշխատանքներ են իրականացնում թուրքական սփյուռքի հետ թուրքերի շրջանում էթնոկրոնական ինքնության պահպանման, ուժեղացման և էթնոկրոնական ձուլմանը խոչընդոտող հարցերում:

Արտասահմանում բնակվող թուրքերի վարչության անմիջական նախաձեռնությամբ ամբողջ աշխարհում կազմակերպվում են թուրքական պատմական և կրոնական արժեքները ցուցադրող և քարոզող ցուցահանդեսներ, սեմինարներ ու գիտաժողովներ: Նշենք նաև, որ վարչության անմիջական ֆինանսավորմամբ տպագրվում են հիմնականում թուրքական, օսմանյան մշակույթին, ինչպես նաև սփյուռքյան համայնքների ստեղծման պատմությանն ու արդի վիճակին նվիրված հոդվածներ ու գրքեր:

Այսպիսով, արևմտյան հասարակություններում թուրքական համայնքի գործունեության տնտեսական, սոցիալ-քաղաքական և էթնո-դավանաբանական ասպեկտների դիտարկումը հնարավորություն է տալիս արևմտյան հասարակությունների կողմից թուրքական համայնքների ներկայացուցիչների նույնականացման և թուրքերի ինքնանույնականացման խնդիրները վերլուծելու արևմտաեվրոպական մշակույթի և արժեքների գերիշխող միջավայրի համատեքստում:

25 Аватков и др. 2013, 116.

26 Аватков и др. 2013, 117.

27 Պողոսյան և այլք 2016, 30:

Չնայած «փափուկ ուժի» քաղաքականության դրական արդյունքներին՝ Թուրքիայի գործունեությունը միտված է արտասահմանում իր ազդեցության առաջնորդման բազմաչափ ռազմավարության մշակմանը՝ վերանայելով և վերլուծելով դրա իրականացման մեխանիզմները:

Էթնոկրոնական վերափոխարկման իռլանդական փորձը

Այս բաժնում փորձ է արվել վեր հանելու իռլանդական սփյուռքի որոշ առանձնահատկություններ, որոնք լույս կսփռեն սփյուռքում իռլանդացիների էթնոկրոնական ինքնության պահպանման, ուժեղացման և էթնոկրոնական վերափոխարկման մեխանիզմների կիրառման գործընթացի վրա:

Իռլանդական սփյուռքի ձևավորման պատմությունն ունի երկու փուլ. առաջինը սկիզբ է առել 17-րդ դարում, երբ Իռլանդիայում հաստատվեց Անգլիայի գերիշխանությունը՝ բողոքականների մեծամասնությամբ: Դրա հետևանքով մեծամասնություն կազմող բնիկ իռլանդացիները, որ դավանանքով կաթոլիկներ էին, անցան իրենց ազգակից բողոքական փոքրամասնության ենթակայության տակ:

Միգրացիայի երկրորդ մեծ ալիքը պայմանավորված էր «Մեծ սովի»²⁸ տարիների (1845-1852 թթ.) դժվարություններով, որոնք հանգեցրեցին Իռլանդիայում բնակչության կազմի ու շարժի կտրուկ փոփոխության,²⁹ բայց մինչ այդ 800.000-ից մինչև 1 միլիոն իռլանդացիներ նավարկեցին Հյուսիսային Ամերիկա, որոնց մոտավորապես կեսը հաստատվեց Կանադայում, իսկ մյուս կեսը՝ Միացյալ Նահանգներում: Այս հանգամանքի մասին խոսելիս՝ պետք է շեշտել այն փաստը, որ այս տեղաշարժից հետո կաթոլիկ արտագաղթողների թիվը գերազանցում էր *անգլիկաններին* և այլ բողոքական համայնքների ներկայացուցիչներին: Իռլանդական *պրեսբիտերական (կալվինականության* հետևորդներ) և *անգլիկան* միգրանտները, որոնք տեղափոխվել են Ամերիկա 19-րդ դարի առաջին կեսին, համեմատաբար քիչ թշնամության էին արժանանում տեղացիների կողմից՝ իրենց սահմանափակ թվով, իսկ իռլանդացիների դեպքում՝ իրենց կրոնի պատճառով:

